7661

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 04 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0072-23

Ձեռնարկողը՝ ***«Ավ Մայնինգ» ՍՊԸ***
ք. Երևան, Կ. Ուլնեցու 31/2

Գործունեությունը՝ ***Քարաթափի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0072-23

<<28>> 04 2023թ.

Արմավիրի մարզի Քարաթափի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Ավ Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ, ուսումնասիրության ծրագիր, թափոնների կառավարման պլան, (Գ կատեգորիա)
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Արտամետ բնակավայր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է 2022-2023թթ. ընթացքում Արմավիրի մարզի Քարաթափի երևակման տարածքում իրականացնել ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ շինարարական ավազի, կոպճի և խճի արդյունահանման նպատակով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն հայտի Քարաթափի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասը գտնվում է Արմավիրի մարզի Բաղրամյան խոշորացված համայնքի Արտամետ բնակավայրում, Հուշակերտ գյուղից 4.2 կմ հյուսիս-արևմուտք և Գրե-Ակկո լեռից 2.0կմ հարավ-արևմուտք, Լենուղի գյուղից 5.0կմ դեպի արևմուտք, Այգևան գյուղից 6.2կմ հարավ-արևմուտք և զբաղեցնում է մոտ 35.34հա մակերես, 918-926մ բացարձակ բարձրությունների վրա: Երևանի հետ կապված է մոտ 60կմ ասֆալտապատ ավտոճանապարհով:

Երկրաձևաբանական տեսակետից Քարաթափի հանքավայրի 1-ին տեղամասի շրջանը գտնվում է Արարատյան դաշտի սահմաններում: Գեոմորֆոլոգիական տեսակետից

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

դաշտավայրի այդ հատվածը ներկայացնում է թույլ ալիքաձև ենթահորիզոնական հարթավայրով:

Քարաթափի հանքավայրի շրջանի կլիման խիստ ցամաքային է: Շրջանը ներառված է չոր ցամաքային կլիմայական գոտում, ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +41°C, իսկ ձմռանը՝ -18°C): Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 350մմ:

Քարաթափի հանքավայրի 1-ին տեղամասի շրջանի հիմնական ջրագրական միավորը Արաքս գետն է, որի հունը գտնվում է հայցվող տարածքից մոտ 10կմ հեռավորության վրա:

Համաձայն հայտի սողանքային երևույթներ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է երկրաձևաբանական առանձնահատկություններովով և տարածքի գրեթե հորիզոնական տեղադրմամբ: Մոտակա սողանքային մարմինը գտնվում է ավելի քան 29կմ հեռավորության վրա՝ Կոշ բնակավայրից հյուսիս-արելք:

Համաձայն հայտի՝ ըստ ֆոնդային նյութերի տվյալների ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների ու հողաբուսական շերտի հզորությունը տեղամասում տատանվում է 1.1-1.4մ սահմաններում, միջինը կազնմում է 1.25մ (բուն հողաբուսական շերտը՝ 0.25մ):

Համաձայն հայտի երկրաբանական հետախուզման բուն տարածքում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան: Բնության հատուկ պահպանվող տարածքներից երևակմանն ամենամոտ գտնվողը «Որդան կարմիր» պետական արգելավայրն է մոտ 21կմ հեռավորության վրա:

Համաձայն նախնական հայտի հայցվող տարածքը հաշվառված է որպես համայնքի, իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական (վարելահող և արոտավայր) և ջրային նպատակային նշանակության հող:

Տեղամասը արևմուտքից, արևելքից և հարավից սահմանակցում է ինտենսիվ գյուղատնտեսական այգիների հետ:

Ըստ հայտի օգտակար հանածոյի որակական հատկություններն ուսումնասիրվելու են համաձայն ՀՍՏ ГОСТ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍՏ ГОСТ 8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների:

«Ավ Մայնինգ» ընկերությունը Քարաթափի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը կազմել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, գեոմորֆոլոգիական ձևը, տարածքի չափերը, դրանց երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

Երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրած տարածքը զբաղեցնում է 35.34հա մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով).

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1.	4442684.22	8406774.08
2.	4442805.24	8406776.76
3.	4443394.82	8406790.38

4.	4443418.54	8406793.14
5.	4443428.61	8406788.31
6.	4443671.71	8406787.81
7.	4443673.22	8407092.67
8.	4443579.51	8407136.42
9.	4443458.40	8407138.88
10.	4443456.38	8407135.73
11.	4443269.49	8407140.33
12.	4442801.51	8407147.65
13.	4442675.23	8407148.84

Համաձայն հայտի տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 35.34հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Նախատեսվում է հորատել 10 հորատանցք 145.5գծ.մ ընդհանուր ծավալով: Հորատանցքերի խորությունը ընդունվում է 9.0-ից 17.5մ: Հորատումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից POLE-HOLE DIGGER հորատող հաստոցով՝ կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով:

Նախատեսվում է անցնել 4 հետախուզահոր յուրաքանչյուրը 5մ խորությամբ, ընդհանուրը 20 գծ.մ ծավալով կամ 120մ^3, այդ թվում 24մ^3 ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ և 6.0մ^3 հողաբուսական շերտ, բուն ԱԿԽ-ն կկազմի 90մ^3: Հետախուզահորերի անցումը հնարավորություն կտա հստակեցնելու տեղամասում ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների հզորությունը և դաշտային պայմաններում որոշելու ավազների բնական խտությունը (բնամասում), ծավալալիրքային զանգվածը և փխրեցման գործակիցը: Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V- VI կարգի ամրության ապարներում: Հետախուզահորի մակերեսը կազմում է 6մ^2, ընդհանուր մակերեսը կազմում է 24մ^2:

Աշխատանքները կիրականացվեն հետախուզահորերից հանված նյութի կշռման եղանակով: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզահորերի 120մ^3 ծավալից 50մ^3-ը օգտագործել կուտակի բնական խտության, ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար:

Երկրաբանակական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը կկազմի՝

- հորատանցքեր – 145.5գծ.մ
- հետախուզահորեր 20.0գծ.մ:

Ընդամենը՝ 165.5գծ.մ

Աշխատանքների ավարտից հետո, նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 90մ^3 ծավալով ավազի կուտակից նմուշարկում, որից հետո կկատարվի մնացած 89.4մ^3 ծավալով կուտակի հետլցնում, իսկ առանձին կուտակված 24մ^3-ը ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները և 6մ^3 հողաբուսական շերտը օգտագործել խախտված հողերի վերականգնման համար:

ԱԿԽ-ի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերից և հետախուզահորերից վերցնել նմուշներ: Հանուկային նմուշները կվերցվեն հորատանցքերի օգտակար զանգվածի ամբողջ հզորությամբ: Կվերցվի 10 հանուկային և 4 ակոսային նմուշ, ընդամենը 14 նմուշ:

Ակոսային նմուշները՝ օգտակար հանածոյի ուղղահայաց և ամբողջ հզորությամբ: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15կգ-ի: Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար ծրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 24.0+350.0=374.0մ², իսկ վերականգման ենթակա /ալյուվիալ-դելյուվիալ և հողաբուսական շերտի/ ընդհանուր ծավալը՝ 39.4+30.0=69.4մ³: Ռեկուլտիվացիայի համար նախատեսված գումարը կազմում է 149600 դրամ:

Նախնական գնահատման հայտով՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Յուղերի ու քսայուղերի փոխարինման աշխատանքների իրականացում հարակից բնակավայրերի մասնագիտացված ընկերություններում, երևակման տարածքում դրանց կուտակման և պահպանման բացառում:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Հետախուզական փորվածքների տեղադրում տեղամասը հյուսիսային սահմանից մոտ 120մ հարավ անցնող տեղական նշանակության ոռոգման ջրատարի երկու կողմից առնվազն 10մ հեռավորության վրա: Ապահովվելու է պաշտպանիչ բնամաս փորվածքների տեղադիրքերի և ջրատարի միջև, ինչը կբացառի ջրատարի վնասումը տեխնիկական միջոցների տեղաշարժի և աշխատանքի ժամանակ:
- Ջրագծի և դրան հարակից տարածքների սահմաններում ընդգրկված ավազակոպճային զանգվածի պաշարների հաշվարկման բացառում:
- Փոշենստեցման նպատակով ճանապարհների, հորատման հարթակների և հետախուզահորերի տարածքի ջրցանում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 35լ տարողությամբ), ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխում մոտակա աղբավայրը: Տեղական կառավարման մարմինների հետ կնքված պայմանագրի հիման վրա և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Արմավիրի մարզի Քարաթափի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արմավիրի մարզպետարանը:

Փորձաքննության ընթացքում յոթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ՝ ՍՊԸ) կողմից ստացվել են բողոք-դիմումներ, որտեղ նշվում են, որ երկրաբանական ուսումնասիրության տարածքի հարևանությամբ գտնվող հողատարածքներում 2020-2023թթ. ընթացքում կատարվել են ավելի քան 10 մլրդ ՀՀ դրամի ներդրումներ, պետական աջակցության ծրագրի շրջանակներում հիմնվել են 450հա ինտենսիվ գյուղատնտեսության այգիներ: Ծրագիրը միտված է ագրոտուրիզմի, ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանմանը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով 2023թ. մարտի 17-ին Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Արտամետ բնակավայրում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը, հանրությունը և ՍՊԸ-ների ներկայացուցիչները տարակարծիք էին նախատեսվող գործունեության իրականացման հարցի շուրջ: ՍՊԸ-ների ներկայացուցիչները դեմ արտահայտվեցին նախատեսվող գործունեության իրականացմանը՝ ելնելով հետագայում հնարավոր հանքավայրի արդյունահանման և դրա հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցություններից:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով երեք անգամ ներկայացվել է լրամշակման: Գործունեությանը հարող տարածքներում գոյություն ունեցող ինտենսիվ գյուղատնտեսական այգիների վրա՝ ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները ներկայացվել են թերի և ոչ լիարժեք, չի ներկայացվել նաև հայցվող տարածքից գյուղատնտեսական այգիների հեռավորությունը: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների, այնուհետև հնարավոր հանքավայրի արդյունահանումն ուղեկցվելու է փոշու առկայությամբ, ինչը բացասական ազդեցություն է ունենալու տարածքում ինտենսիվ գյուղատնտեսության և ագրոտուրիզմի զարգացման վրա:

Հաշվի առնելով երկրաբանական ուսումնասիրության տարածքին հարակից գյուղատնտեսական այգիների բացասական ազդեցությունների հնարավոր ռիսկերը՝ նախատեսվող գործունեության իրականացումը համարվում է ոչ նպատակահարմար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանական եզրահանգումները՝ «ԱՎ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Քարաթափի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան